ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1947, № 8 *Общественные науки*

Ս. Խրիմյան

ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄՆԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅՈՒՄ ՀԵՏՊԱՏԵՐԱԶՆՅԱՆ ՆՈՐ ՀՆԳԱՄՅԱԿՈՒՄ

Սոցիալիստական հասարակության կառուցումը, որն իրագործվում է Սովետական Միության մեջ, հիմնված է գիտակցական ղեկավարման վրա, որը ենթադրում է այդ հասարակության կառուցման ուղիների և դրան յուրահատուկ զարգացման նոր օրինաչափությունների իմացումը։

Լենինը և Ստալինը ստեղծագործորեն կիրառելով մարքսիստական թեորիան սոցիալիստական ռևոլուցիայի և սոցիալիզմի կառուցման պայմաններում, բացահայտեցին սոցիալիստական հասարակության զարգացման հիմնական օրենքները։ Սոցիալիստական հասարակության զարգացման ուղիների գիտական որոշման մեջ Լենինի և Ստալինի ղեկավար գաղափարները բացառիկ բարենպաստ պայմաններ են ստեղծում մարքս-լենինյան թեորիայի հիման վրա սոցիալիստական հասարակության օրինաչափությունները պարզելու և նրա առավելությունները հայտարերելու համար։

Սոցիալիզմի կառուցումն ավարտելու և աստիճանաբար կոմունիզմին անցնելու պայմաններում, որ մեր երկիրը կատարում է հայրենական պատերազմից հետո, մեծ նշանակություն է ստանում սովետական տնտեսագիտության դրույթների հետագա մշակումը։ Հասկանալի է, որ այդ իրագործության մեջ տնտեսագիտության առաջ կանգնած խնդիրներն առանձնապես պատասխանատու են և բարդ։ Տնտեսագիտությունը պետք է ընդհանրացնի սոցիալիստական շինարարության հարուստ փորձը, հետազոտի նոր օրինաչափությունները և մատնացույց անի երկրի արտադրողական ուժերի ավելի արագ զարգացման ուղիներն ու հնարավորությունները նրա առաջընթաց շարժման մեջ դեպի կոմունիզմի բարձրագույն փուլը։ Տնտեսագիտությունը պետք է լենինյան ստալինյան թեորիայի լույսի տակ տա նաև ժամանակակից կապիտալիզմի քաղաքատնտեսության հարցերի մշակումը, լուրջ քննադատության ենթարկելով արտասահմանում երևան եկած իմպերիալիզմի ֆատագոֆների տնտեսագիտական զանազան կեղծ թեորիաները։

Տնտեսագիտության զարգացումը, սոցիալիստական հասարակության կառուցումը, պրակտիկայի տեսական հիմնավորումը և արտասահմանյան կեղծ-գիտական ու ֆաշասակար թեորիաների քննադատությունը հնարավորություն կտան նաև լայնորեն իդեոլոգիական աշխատանք ծավալելու մասսաների կոմունիստական դաստիարակության համար։

Անհրաժեշտ ինչու երկրի տնտեսական-քաղաքական կյանքի ներկայ էտապում շատ կարևոր նշանակություն է ստանում սովետական տնտեսագիտության մշակումը որպես մարքս-լենինյան թեորիայի հիմնական բաժիններից մեկը։

և դրա համար էլ ներկայումս այնքան սուր կերպով է դրվում տնտեսագիտության հետաձգությունը վերացնելու հարցը։

Պարտիական ղեկավար մասուլը նշում է, որ տնտեսագիտության բնագավառում գիտական աշխատանքի մակարդակը չի համապատասխանում սովետական պետության առաջ կանգնած նոր աճած խնդիրներին, որ տնտեսագիտությունն անթույլատրելի կերպով ետ է մնում ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման պահանջներից, պատշաճ չափով չի օգնում նոր հնգամյա պլանի կարևորագույն խնդիրների լուծմանը, որ քաղաքատնտեսության և հատկապես սոցիալիզմի քաղաքատնտեսության բազմաթիվ արմատական հրատապ հարցեր ժամանակին և խոր կերպով չեն մշակվում սովետական գիտնականների աշխատություններում, որ գիտական աշխատություններ չեն ստեղծված արտասահմանյան երկրների էկոնոմիկայի և քաղաքականության կարևորագույն հարցերի շուրջը։

Ինարկե, Սովետական Միության մեծ տնտեսագիտության վիճակի մասկարդակը որոշում են, ամենից առաջ, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի առաջատար ինստիտուտները՝ էկոնոմիկայի ինստիտուտը և Համաշխարհային տնտեսության և համաշխարհային քաղաքականության ինստիտուտը։ Սակայն մեծագույն սխալ և անթույլատրելի բարեհոգություն կլիներ, եթե տնտեսագիտությամբ զբաղվող յուրաքանչյուր գիտական կազմակերպություն և յուրաքանչյուր տնտեսագետ-գիտական աշխատող անդամներին, որ այդ ցուցումները ոչ պակաս չափով վերաբերում են նաև իրենց և, իրենց ուժերի ու հնարավորությունների ներածին չափով, չներգրավվեին տնտեսագիտության հետաձգությունը վերացնելու ընդհանուր գործի մեջ։

* * *

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում մինչև վերջին ժամանակներս տնտեսագիտության հարցերը կենտրոնացված էին էկոնոմիկայի սեկտորում, որը միաժամանակ մշակում էր նաև աշխարհագրական թեմատիկա, հատկապես տնտեսական աշխարհագրության գծով։

Ներկայումս, տնտեսագիտության առաջ կանգնած խնդիրների բացառիկ կարևորության և լրջության կապակցությամբ, կառավարությունը որոշում է կայացրել Սեկտորը ինստիտուտի վերափոխելու մասին, նպատակ ունենալով գիտական, նյութական և կազմակերպական անհրաժեշտ նախադրյալներ ստեղծել տնտեսագիտական թեմատիկան ավելի լայն և ավելի խոր կերպով ընդգրկելու համար։

Միաժամանակ աշխարհագրական թեմատիկան, այդ թվում նաև տնտեսական աշխարհագրության թեմատիկան, ամբողջությամբ առանձնացվում և կենտրոնացվում է հատկապես կազմակերպվող Աշխարհագրության սեկտորում։

Էկոնոմիկայի գիտա-հետազոտական աշխատությունների պլանը քանիցս բազմակողմանիորեն քննարկվել է Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայում, սկզբում որպես Սեկտորի պլան, որի մեջ պետք է կենտրոնացվեին ինչպես տնտեսագիտական, այնպես էլ աշխարհագրական աշխատությունները, իսկ այնուհետև որպես էկոնոմիկայի ապագա ինստիտուտի պլան, ինստիտուտ, որ կոչված է հանդիսանալու տնտեսագիտության զարգացման կենտրոնը Հայաստանում։

Այդ ինստիտուտը կազմակերպվեց Տնտեսագիտության սեկտորի բազայի վրա և բնականաբար պրոբլեմների և թեմատիկայի հարցում որոշ հաջորդականություն է պահպանում Սեկտորի հետ, ուստի ինստիտուտի աշխատանքները լուսաբանելու համար անհրաժեշտ է համառոտակի կանգառնել Սեկտորին վերաբերող մի քանի ժամանակների վրա։

1940 թվին, Սևան—Զանգվի պրոբլեմի մշակումը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիային հանձնվելու և նրա կոմպլեքսային օգտագործման սխեման կազմելու կապակցությամբ, Գեոլոգիական Ինստիտուտի Ջրային սեկտորում ստեղծվեց էկոնոմիկայի խմբակ, որն զբաղվում էր ջրաէներգետիկ պրոբլեմների էկոնոմիկայով։ Նախնական աշխատանքներն ավարտվեցին 1941 թվի կեսերին։ Հետագայում ենթադրվում էր դրանք այնպես ծավալել, որ հնարավոր լիներ կազմել ռեսպուբլիկայի ջրային ռեսուրսների օգտագործման ընդհանուր պլանը։

Սակայն, հունիս ամսին սկսված պատերազմը կանգնեցրեց ջրաէներգետիկ պրոբլեմների մշակումը և այլ ուղղություն տվեց էկոնոմիկայի աշխատանքներին. 1941 թվի օգոստոսին կազմակերպված էկոնոմիկայի ինքնուրույն սեկտորն իր թեմատիկ պլանում ուներ և մշակում էր գլխավորապես պատերազմի հետ կապված հարցեր։ Այդ դրությունը հիմնականում շարունակվեց մինչև 1945 թ.։ Այդ ժամանակվանից Սեկտորում վերսկսվեց կոմպլեքսային պրոբլեմների մշակման թեմատիկան և միաժամանակ սկսվեց ժողովրդական տնտեսության զարգացման գծով կուտակված նյութերի ընդհանրացմանը վերաբերող հարցերի մշակումը։ 1945—1946 թ.թ. և մասամբ 1944 թ. աշխատանքների հետևանքով ավարտվեցին ռեսպուբլիկայի խոշոր մասշտաբի տնտեսական քարտեզը և նրա բոլոր հավելվածները, ինչպես նաև Հայաստանի թե սովետական և թե նախասովետական ժամանակաշրջանի էկոնոմիկայի զարգացման ամփոփիչ աշխատանքները։

Այսպիսով, էկոնոմիկայի խմբի, իսկ այնուհետև էկոնոմիկայի սեկտորի անցած ճանապարհը մինչև 1947 թ., աշխատանքների բնույթի տեսակետից, կարող է բաժանվել երեք ժամանակաշրջանի. առաջին ժամանակաշրջանը (1940—1941 թ.թ.)—ջրաէներգետիկ պրոբլեմների էկոնոմիկա. երկրորդ ժամանակաշրջանը (1942—1945 թ.թ.)—պատերազմի ժամանակվա տնտեսագիտական և քարտեզագրական թեմատիկա. երրորդ ժամանակաշրջանը (1945—1946 թ.թ.)—խաղաղ ժամանակվա թեմատիկա ռեսպուբլիկայի էկոնոմիկայի և աշխարհագրության գծով։

Էկոնոմիկայի խումբը ջրանտեսության կոմպլեքսային պրոբլեմների էկոնոմիկայի աշխատանքները հենց սկզբից դրել էր անհրաժեշտ լայնությամբ՝ ուսումնասիրման ենթակա հարցերի ընդգրկման իմաստով. քանի որ Սևան - Զանգվի ջրային ռեսուրսների և մյուս ջրային աղբյուրների օգտագործման գլխավոր (գեներալ) պլանը, ըստ էության, պետք է հանդիսանար ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության զարգացման պլանի հիմնական բազան։ Եվ իրոք, ջրային ռեսուրսների օգտագործման սխեման պետք է նախատեսեր, մի կողմից, ռեսպուբլիկայի առավել արժեքավոր հողային մասսիվները ոռոգման ջրով ապահովելը. իսկ մյուս կողմից՝ էլեկտրաէներգիա արտադրելը և այն՝ արդյունաբերական, գյուղատնտեսական ու տրանսպորտային ձեռնարկություններին մատակարարելը։

Կոմպլեքսային սխեմայի էկոնոմիկայի գծով կատարված աշխատանք-

ների նախնական արդյունքները, որոնք լույս տեսան 1941 թվին (երեք հատորով), ներկայացնում էին գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացում ունեցող վիճակի վերլուծման հարցերի մշակումը և նրանց զարգացման ու տեղաբաշխման հիմնական դրույթների հայտարարումը՝ կապված այդ պրոբլեմի իրագործման հետ։ Միաժամանակ այդ աշխատությունները նշում էին էկոնոմիկայի այն հարցերի շրջանը, որոնց ուսումնասիրությունը պետք է դրվեր գլխավոր պլանը կազմելու հիմքում։ Նախնական սխեման լիակատար հավանության արժանացավ ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի կողմից, որն այն ժամանակ էլ նշեց, թե Հայկական ֆիլիալի հիմնական խնդիրներից մեկը Հայաստանի ջրային ռեսուրսների օգտագործման ընդհանուր պլանը կազմելու գիտա-հետազոտական աշխատանքներն են, այն համարելով երկրի ժողովրդական տնտեսության համար առաջնակարգ նշանակություն ունեցող խնդիր։

Դեռ 1940 թվի վերջերին սկսվեցին գլխավոր պլանի առավել կարևոր օժանդակ աշխատանքները ռեսպուբլիկայի աշխատանքային բալանսի և աշխատանքային ռեզերվներն օգտագործելու, ինչպես նաև գյուղատնտեսության նյութական ռեսուրսների բալանսի հարցերի մշակումը։ Պատերազմի պատճառով այդ աշխատանքները որոշ չափով կրճատվեցին և 1942 թվին ավարտվեցին ցուցանիշների ավելի նեղ շրջանի գծով, քան ենթադրվում էր սկզբնապես։ Այնուամենայնիվ, այդ բալանսային աշխատանքների արդյունքները, որոնք շատ հետաքրքրական դուրս եկան, օգտագործվեցին ավելի ուշ (1944—1945 թ.թ.), գլխավոր պլանը կազմելու և մյուս տնտեսագիտական աշխատանքների ժամանակ։ Այդ առաջին ժամանակաշրջանի աշխատանքները ցույց տվին, որ ռեսպուբլիկայի ջրային ռեսուրսների օգտագործման ուսումնասիրությունը ըստ էության վերջ է դրվում ժողովրդական տնտեսության և նրա զարգացման բազմակողմանի ուսումնասիրման ու նրա զարգացման գլխավոր ուղղությունների հիմնավորման խնդրի՝ երկրի արտադրողական բոլոր ուժերի օգտագործման բազայի վրա։ Այստեղից, բնականաբար, բխում էր ռեսպուբլիկայում այնպիսի գիտական կազմակերպություն ստեղծելու անհրաժեշտությունը, որը կարողանար կենտրոնական հանձնաժողովի գիտա-հետազոտական ինստիտուտների օգնությամբ ապահովել տնտեսագիտական թեմատիկայի պլանաչափ մշակումը՝ թեորիական բավականաչափ բարձր մակարդակով։ Այստեղից նաև բխում էր տնտեսագիտական բարդագույն կոդերի նախապատրաստման անհրաժեշտությունը, կադրեր, որոնք կարողանային կոմպլեքսային միջճյուղային և միջշրջանային բարդ կապերի մեջ և գիտենային հսկայական չափով աճած ու բարդացած սոցիալիստական տնտեսության այս կամ այն ճյուղի թեորիական ու գործնական հարցերը։

Ելնելով վերոհիշյալ հանգամանքներից, ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալի Նախագահությունը դեռևս 1940 թվի օգոստոսին որոշում կայացրեց իր սիստեմում 1941 թ. սկզբից ստեղծել էկոնոմիկայի սեկտոր՝ տնտեսական աշխարհագրության խմբակով։ Սակայն այդ որոշումը կենսագործվեց 1941 թ. հուլիսին, պատերազմի սկսվելուց հետո, ըստ որում տարվա սկզբից նախատեսված թեմատիկան, ինչպես ասվեց վերևում, ենթարկվեց զգալի փոփոխության, և նոր կազմակերպության

առաջ դրվեցին ստեղծված ռազմական իրադրությունից բխող ուրիշ պահանջներ։

1942 թ. ժամանակաշրջանը, այսպիսով, նվիրվեց հատուկ բնույթի թեմատիկայի (հիմնականում տնտեսա-աշխարհագրական և աշխարհագրական)։ Այդ երկու ժամանակաշրջանների աշխատանքներն իրենց բնական շարունակումը և զարգացումը գտան արդեն որպես խաղաղ ժամանակի աշխատանքներ, որոնք գլխավորապես նվիրված էին երկրի արտադրողական ուժերի և էկոնոմիկայի հետպատերազմյան զարգացման հարցերին։

Մանրամասնորեն կանգ չառնելով այդ ժամանակաշրջանի աշխատանքների վրա, նկատենք միայն, որ նախապատերազմյան ժամանակաշրջանում բացի ջրանտեսության պրոբլեմների և ժողովրդական տնտեսության վերաբերյալ կապիտալ աշխատություններից, որի արդյունքը հանդիսացան տնտեսակն քարտեզը և դրա վերաբերյալ նյութերը, ավարտվեցին, ինչպես ասվեց վերևում, ժողովրդական տնտեսության ճյուղերի էկոնոմիկայի, առանձին տերիտորիալ մասսիվների էկոնոմիկայի, ինչպես նաև Հայաստանի նախահեղափոխական էկոնոմիկայի վերաբերյալ մի շարք այլ աշխատություններ։

Մենք մանրամասն կանգ առանք առաջին ժամանակաշրջանի աշխատանքների վրա, որպեսզի ցույց տանք, թե որոնք էին այն պահանջները, որոնք կյանքի կոչեցին էկոնոմիկայի վերաբերյալ գիտա-հետազոտական կազմակերպությունը Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի սիստեմում, թե այդ պահանջների ազդեցության տակ ինչ ուղղություն ստացան այդ կազմակերպության աշխատանքները, և թե նրանք ինչպես անդրադարձան գիտական թեմատիկայի հետագա զարգացման վրա։

Կարելի է ասել, որ հենց սկզբից Սեկտորի աշխատանքների ուղղությունը որոշում էին երկու պրոբլեմ՝ արտադրողական ուժերի տեղադրումը և սոցիալիստական վերարտադրությունը։ Այդ պրոբլեմները ներկայումս էլ հանդիսանում են էկոնոմիկայի սեկտորի հիմնական պրոբլեմները։

Անցած ուղու հետևանքով էկոնոմիկայի սեկտորը ներկայումս հնարավորություն ունի էկոնոմիկայի ինստիտուտին հանձնելու Հայկական ՍՍՌ էկոնոմիկայի վերաբերյալ մի շարք լիավարտ գիտական աշխատություններ և կուտակված ու մշակված բազմաթիվ նյութեր։ Դրա հետ միասին Սեկտորը Ինստիտուտին է հանձնում գիտական աշխատանքի որոշ փորձ ձեռք բերած կադրեր։ Վերջին երեք տարվա ընթացքում Սեկտորը պատրաստել է տնտեսագիտական գիտություններների 7 թեկնածու, իսկ ներկայումս չորս մարդ աշխատում են իրենց դոկտորական դիսերտացիաների վրա։

Այսպիսով, էկոնոմիկայի Ինստիտուտը կյանք է մտնում որոշ չափով զինված և աշխատանքների ու նյութերի գիտական ֆոնդով և գիտական որոշ կադրերով. դա Ինստիտուտին պետք է օգնի տնտեսագիտության ասպարեզում նրա առաջ կանգնած պատասխանատու խնդիրները լուծելու գործում։

* * *

Ստալինյան հնգամյակների և Հայրենական Մեծ պատերազմի տարիներին Սովետական Միության անտեսական և քաղաքական զարգացման արդյունքները և սովետական էկոնոմիկայի, գիտության ու կուլտուրայի զարգացման հեռանկարները մոտակա հնգամյակների ընթացքում, որ ընկեր

Ստալինը ավել է իր աշխատություններում և զուցումներում, որոշում են այն պրոբլեմների ու հարցերի շրջանը, որոնք առաջին հերթին պետք է դառնան սովետական մասնագետների ուսումնասիրության ու մշակման առարկա։

Սոցիալիստական շինարարության հարուստ փորձի թեորետիկ ընդհանրացումը, ինչպես ասվեց վերևում, սովետական հասարակակարգի տնտեսական հիմունքների հետազոտությունը, սոցիալիստական հասարակության զարգացման տնտեսական օրենքների վերլուծությունը, սոցիալիստական էկոնոմիկայի պրոբլեմների և նրա զարգացման ուղիների մշակումը, բուրժուական տնտեսագիտական թեորիաների բազմակողմանի քննադատությունը—սրանք են գիտական կարևորագույն խնդիրները էկոնոմիկայի ասպարեզում։

Հայկական ՍՍՌ Գիտությունների Ակադեմիայի աշխատողների առաջ համապատասխանորեն ծառանում են սոցիալիզմի և ժամանակակից կապիտալիզմի քաղաքատնտեսության պրոբլեմների ուսումնասիրության, Հայկական ՍՍՌ սոցիալիստական շինարարության պրակտիկան ընդհանրացնելու, ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության հետագա զարգացման ուղիների, ինչպես նաև ժողովրդական տնտեսության զարգացման պատմության և տնտեսագիտական մտքի պատմության ասպարեզում կատարվելիք հետազոտությունների հետ կապված գիտա-հետազոտական խնդիրները։

Հնգամյա պլանով նշված թեմատիկան ընդգրկում է սոցիալիստական վերարտադրության, արտադրողական ուժերի տեղադրման, ժողովրդական տնտեսության և տնտեսագիտական մտքի պատմության, ժամանակակից կապիտալիզմի էկոնոմիկայի պրոբլեմները։

* * *

Սոցիալիստական վերարտադրության և արտադրողական ուժերի տեղադրման պրոբլեմները հանդիսանում են աշխատանքների պլանի խոշորագույն և կարևորագույն բաժինը։ Դրանք ընդգրկում են սոցիալիզմը քաղաքատնտեսության հարցերը և տալիս են սովետական էկոնոմիկայի հրատապ հարցերի թեորետիկ մշակումը՝ երկրի ժողովրդական տնտեսության զարգացման հարցերի հետ մի։

Այդ պրոբլեմների թեորետիկ մասը պարունակում է ժողովրդական տնտեսության և նրա առանձին ճյուղերի տեղադրումը որոշող և սոցիալիստական ընդլայնված վերարտադրության ուղիներն ու նրա առավելությունները բացահայտող սկզբունքների ու գործոնների վերլուծությունը. նա հետազոտում է արդյունաբերական հանգույցների, գյուղատնտեսական շրջանների և տրանսպորտային ուղղությունների ստեղծման ու դրանց կոմպլեքսային զարգացման պրոցեսները և, սոցիալիստական շինարարության պրակտիկայի ընդհանրացման հիման վրա, տալիս է տեղադրման և սոցիալիստական ընդլայնված վերարտադրության օրինաչափությունները, ինչպես նաև սահմանում է տնտեսական ռայոնացման սկզբունքները։

Այդ պրոբլեմների գործնական կողմը հանդիսանում է ժողովրդական տնտեսության զարգացման ուղիների հայտարերումն ըստ առանձին ճյուղերի ու տերիտորիալ միավորների և ըստ ամբողջ ռեսպուբլիկայի, այն

ձևով, ինչպես դրանք որոշվում են սոցիալիստական շինարարության անցած էտապներով, նոր հնգամյակում, ինչպես նաև ավելի հեռավոր ապագայում։

Խոշոր գիր է խաղալու շրջանների արտադրողական ուժերի բազմակողմանի ուսումնասիրությունը՝ ժողովրդական տնտեսության զարգացման հաշար դրանց կոմպլեքսային օգտագործման նպատակով։

Սոցիալիստական վերարտադրության պրոբլեմի գծով լինելու է թեմաների երկու խոշոր բաժին. ա) Հայկական ՍՍՌ էկոնոմիկայի զարգացումը, և բ) Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսությունը նոր հնգամյակում և նրա հետագա զարգացման հեռանկարները։

Առաջին բաժնի մեջ մտնում են սովետական էկոնոմիկայի զարգացման թեմաներ, հիմնականում՝ սոցիալիստական շինարարության անցած էտապների, ինչպես նաև IV հնգամյակի թեմաները (վերականգնման ժամանակաշրջան, ստալինյան հնգամյակներ, հայրենական պատերազմ, չորրորդ հնգամյակի տարիներ)։ Բաժնի թեմատիկան, կատարված ամփոփիչ աշխատանքների հետ միասին (արդյունաբերության, գյուղատնտեսության, տրանսպորտի զարգացում), ընդգրկում է և մենագրություններ տնտեսության առանձին ճյուղերի, հիմնական ֆոնդերի վերարտադրության, գյուղատնտեսական արտադրության և վերարտադրության, արդյունաբերության և գյուղատնտեսության մեջ աշխատանքի արտադրողականության, ժողովրդական տնտեսության պլանավորման սիստեմի, ինչպես նաև առաջավոր կոլխոզների և առանձին խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների փորձի ուսումնասիրության և ընդհանրացման վերաբերյալ։ Բաժնի առավել նշանակալից թեմաները Հայկական ՍՍՌ էկոնոմիկայի զարգացման, ժողովրդական տնտեսության հիմնական ֆոնդերի վերարտադրության, Հայկական ՍՍՌ կոլխոզներում գյուղատնտեսության ընդլայնված վերարտադրության, Հայկական ՍՍՌ-ում աշխատանքային ռեսուրսների ու դրանց օգտագործման թեմաներն են։

Երկրորդ բաժնի գծով առաջին հերթին մշակվում են Հայկական ՍՍՌ տնտեսության զարգացման արդեն իրականացվող կոմպլեքսային խոշոր պրոբլեմները։ Օրինակ՝ կոմպլեքսային պրոբլեմները և նրանց դերը Հայկական ՍՍՌ ժողովրդական տնտեսության զարգացման մեջ. Գյումուշի հիդրոկայանի և նրա վրա հենվող արդյունաբերության էկոնոմիկան. Զանգեզուրի արտադրողական ուժերի կոմպլեքսային զարգացումը, ինչպես նաև էներգետիկայի, իրրիգացիայի և արդյունաբերության, գյուղատնտեսության ու տրանսպորտի մի քանի կարևորագույն ճյուղերի զարգացման ընդհանուր հեռանկարների վերաբերյալ հարցերը։ Այդ բաժնի աշխատանքները մեծ մասամբ կատարվում են գիտա-հետազոտական այլ հիմնարկությունների, համապատասխան գերատեսչությունների և Գետպլանի հետ հաստատեզ։

Արտադրության տեղադրման պրոբլեմի գծով կատարվելու են հետազոտություններ և ավարտվելու են առանձին մասսիվների՝ Արարատյան դաշտի, Զանգեզուրի, Սևանի ավազանի, Շիրակի, Վայքի, Փուզարքի, Ազատեկ էկոնոմիկայի ուսումնասիրման աշխատանքները։

Դրանց վերաբերյալ մենագրությունները կտան այդ շրջանների տնտեսության զարգացման արդյունքների ամփոփումը և դրանց հետագա

մասնագիտացման հեռանկարները։ Հետազոտական աշխատանքներ են կատարվելու նաև արդյունաբերական հանդույցների, գյուղատնտեսական շրջանների և տրանսպորտային ուղղությունների վերաբերյալ, որոնք վերլուծելու են դրանց կոյացման և կոմպլեքսային զարգացման պրոցեսները։

Այդ աշխատանքների արդյունքների ընդհանրացման և առանձին մասնիցների վերաբերյալ մենագրական հետազոտությունների հիման վրա ենթադրվում է տալ ռեսպուբլիկայի տնտեսական շրջանների սխեման և դրանց զարգացման հեռանկարները, լուսաբանելով երկրի սոցիալիստական տնտեսության ռայոնացման մեթոդոլոգիական հիմնական հարցերը։

Այսպիսով, սոցիալիզմի քաղաքատնտեսության հիշյալ պրոբլեմների գծով կատարվող աշխատանքներում ենթադրվում է լուսաբանել և տեսականորեն մշակել արտադրողական ուժերի սոցիալիստական տեղադրման, շրջանացման, ժողովրդական տնտեսության պլանավորման սիստեմի, սոցիալիստական ինդուստրացման, դիֆերենցիալ ռենտայի և մի քանի ուրիշ հարցեր։

Տիտական աշխատանքների հնգամյա պլանի կարևոր հարցեր են հանդիսանում նաև Հայաստանի ժողովրդական տնտեսության պատմության և հայ տնտեսագիտական մտքի պատմության պրոբլեմները։ Վերջինիս ուսումնասիրությունը մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի տնտեսության և կուլտուրայի պատմությունը լուսաբանելու տեսակետից։

Այստեղ սովետական գիտության առաջ կանգնած է երկրի անցյալի, առաջին հերթին Հոկտեմբերյան Մեծ ռևոլուցիայի նախընթաց շրջանի տնտեսական և սոցիալական զարգացման հիմնական հարցերի հետազոտությունը, կապիտալիստական հարաբերությունների ծագման ու զարգացման և դասակարգային հակասությունների աճման պրոցեսների ուսումնասիրությունը, ինչպես նաև անցյալում, գլխավորապես 19-րդ դարում, հայ տնտեսագիտական մտքի զարգացման լուրջ խնդիրը, ներառյալ հայ իրականության մեջ մարքսիզմի և մարքսիստական տնտեսագիտության տարածման ու զարգացման ժամանակաշրջանը։ Սրանք են տվյալ պրոբլեմի ընդգրկած հիմնական հարցերը։

Այս պրոբլեմի գծով նոր հնգամյակում ծրագրվում է երկու ուղղությամբ աշխատանք. ա) Հայաստանում կապիտալիստական հարաբերությունների զարգացման պատմությունը և բ) հայ տնտեսագիտական մտքի պատմությունը։ Առաջին բաժնի գծով նախատեսված են երկու աշխատանք՝ մի ընդհանուր աշխատանք Հայաստանում կապիտալիզմի զարգացման պատմության վերաբերյալ և մի հատուկ աշխատանք նախառևոլուցիոն Հայաստանի ագրարային հարաբերությունների զարգացման վերաբերյալ։

Երկրորդ բաժնի գծով ծրագրվում է ուսումնասիրել 19-րդ դարի երկրորդ կեսում հայ տնտեսագիտական մտքի պատմությունը, հայ իրականության մեջ մարքսիզմի և մարքսիստական տնտեսագիտության զարգացման հարցերը, ինչպես և մենագրություններ տալ հասարակական-քաղաքական առանձին գործիչների (Շահումյան, Սպանդարյան, Ալիխանի և այլն) տնտեսագիտական հայացքների և հայ պարբերական մամուլի քաղաքատնտեսագիտական ուղղության մասին։

Վերոհիշյալ երեք պրոբլեմները հիմնական պրոբլեմներ են, որոնք որոշում են գիտա-հետազոտական աշխատանքի և տնտեսագիտության զարգա-

ցումը Հայաստանում ոչ միայն մոտակա հնգամյակում, այլև հետագայում։

Ուսցի երեք հիմնական պրոբլեմներից, հնգամյա պլանը նախատեսում է ժամանակակից կապիտալիզմի էկոնոմիկայի վերաբերյալ աշխատանքներ։ Մեզ շրջապատող կապիտալիստական պետությունների հետպատերազմյան զարգացումը գիտա-հետազոտական մեծ հետաքրքրություն է ներկայացնում։ Այդ հարցն ունի նաև գործնական նշանակություն, որովհետև հարևաններին ճանաչելը կնպաստի կուլտուրական և տնտեսական կապերի զարգացմանը նրանց հետ։ Այդ պրոբլեմի գծով նախատեսված թեմաները վերաբերում են Մերձավոր Արևելքի երկրներում պատերազմի ժամանակ կատարված սոցիալ-քաղաքական և տնտեսական փոփոխությունների վերլուծությանը և այդ երկրների էկոնոմիկային՝ երկրորդ համաշխարհային պատերազմից հետո։ Կապիտալիստական առանձին երկրների էկոնոմիկայի ու քաղաքականության վերաբերյալ աշխատությունների հետ միասին ենթադրվում է նաև մենագրություն տալ Մերձավոր Արևելքում իմպերիալիստական տերությունների հակասությունների զարգացման վերաբերյալ։

* * *

Հնգամյա պլանի թեմատիկան, ինչպես ասացինք, բազմիցս քննվել է այս պահանջների համապատասխանության տեսանկյունից, որոնք այսօր ներկայացվում են տնտեսագիտությանը։ Պետք է նշել, որ դա համապատասխանում է տնտեսագիտության զարգացման թեորիական պահանջներին և կապակցված է երկրի արտադրողական ուժերի զարգացման գործնական պահանջմունքների հետ։

Հիմնական պրոբլեմների կատարումը հնարավորություն կտա Ինստիտուտին, իր ուժերից բացի, իր շուրջը համախմբելու նաև Համալսարանի և ռեսպուբլիկայի մյուս բարձրագույն ուսումնական հաստատությունների համապատասխան ամբիոնների ուժերը։ Դա հնարավորություն կտա միասնական պլան մտցնելու գիտական կազմակերպությունների աշխատանքի մեջ, կնպաստի զուգահեռականության վերացմանը և պայմաններ կստեղծի տնտեսագիտական կադրերի իսկական աճման համար։

Այս ամենի կապակցությամբ առանձնահատուկ նշանակություն է ստանում պլանի կատարման հարցը։ 1947 թվից արդեն անցել է ութ ամիս, իսկ Ինստիտուտի կազմակերպումը դեռևս չի ավարտված։ Պետք է արագացնել Ինստիտուտի կազմակերպման գործը, և անհրաժեշտ է, որ Գիտությունների Ակադեմիան սկզբից ևեթ գիտական ու նյութական բոլոր նախադրյալներն ստեղծի՝ հնգամյա պլանի համաձայն աշխատանքները Ինստիտուտում լրիվ ծավալելու համար։